«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ Ուսուցչի կողմից սովորողների ուսուցման և դաստիարակության պլանավորումը՝ հանրակրթական պետական և առարկայական չափորոշիչներին համապատասխան

ՀԵՂԻՆԱԿ Ալլա Վարդգեսի Պետրոսյան

ԽՈՒՄԲ /ԱՌԱՐԿԱ/ 6-րդ խումբ, Հայոց լեզու և գրականություն

ՂԵԿԱՎԱՐ Արմինե Ալբերտի Ղազարյան

ՍԵՎԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……..……..3

Կրթադաստիարակչական նոր մոտեցումները ……4
Ուսուցչի գործունեության դիտարկումներ……..……10
Ուսուցման համընդհանուր ձևավորումը որպես դասավանդման
լավագույն մեթոդաբանություն……..……..11
Դասի պլան ՈՒՀՁ սկզբունքներով……..……13

Եզրակացություն……15
Օգտագործված գրականության ցանկ……..……16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ուսուցումն ու դաստիարակությունը բոլոր ժամանակներում և ամենուրեք եղել ու մնում են մարդկային հասարակության գլխավոր հիմնախնդիրներից մեկը:

Ուսուցումը ուսուցչի կողմից աշակերտի իմացության ոլորտի զարգացումն ու ընդլայնումն է, նրա ճանաչողական կարողությունների և հմտությունների ձևավորման գործընթացը:

Կրթության որակի բարձրացումը որոշվում է ուսուցման ակտիվ գործիքների կիրառմամբ: Ակտիվ ուսուցումը ենթադրում է սովորողների ներգրավում ուսումնական գործընթաց: Այդ դեպքում սովորողը պարտադիր պետք է ակտիվ գործի և այդ գործունեության ընթացքում բացահայտի, մշակի և կիրառի ստացված գիտելիքները:

Դաստիարակությունը հասարակական կյանքի համընդհանուր անհրաժեշտ կատեգորիա է և սերտորեն կապված է ուսուցման հետ: Այն «ավագ սերունդների կողմից նոր սերունդներին հասարակական-պատմական փորձի փոխանցման գործընթացն է՝ նրանց կյանքի և աշխատանքի նախապատրաստելու նպատակով, որն անհրաժեշտ է հասարակության հետագա զարգացումն ապահովելու համար: Մանկավարժական գիտության մեջ դաստիարակությունը հասկացվում է նաև նեղ իմաստով՝ որպես անձի վարքագիծ՝ բնավորություն, հարաբերությունների մշակույթ, աշխատանքային մշակույթի յուրացում և այլն, այսինքն՝ որպես բարոյական, աշխատանքային, ֆիզիկական և գեղագիտական դաստիարակություն»[1]:

[1] https://hy.wikipedia.org/wiki/%D5%84%D5%A1%D5%B6%D5% AF%D5%A1%D5%BE%D5%A1% D6%80%D5%AA%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6

ՈՒՍՈՒՑՉԻ ԿՈՂՄԻՑ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ և ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ՝ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ

Երեխայի ուսուցման նպատակն է նրան ընդունակ դարձնել հետագայում զարգանալու առանց ուսուցչի:

Է. Հաբարդ

Ապագայում անգրագետ կհամարեն ոչ թե նրանց, ովքեր չեն կարող կարդալ ու գրել, այլ նրանց, ովքեր չեն կարող սովորել, ապա մոռանալ այն, ինչ սովորել էին և սովորել նորը:

Ա.Տոֆֆլեր

Գոյատևում է ոչ ամենաուժեղը և ոչ էլ առավել խելացին, այլ նա ով լավագույնն է արձագանքում փոփոխություններին:

Չ.Դարվին

Կրթադաստիարակչական նոր մոտեցումներ

Ժամանակակից աշխարհում կրթական ծրագրերի, ուսումնական պլանների մշակման տարբեր մոտեցումներ կան, որոնցից երեքը առավել հաճախ են կիրառվում. դրանք են՝ **գիտելիքահեն** կրթական ծրագիրը, **ուսուցման նպատակների վրա հիմնված** ծրագիրը և **կարողունակությունների** (կոմպետենցիաների) վրա հիմնված կրթական ծրագիրը:

Հանրակրթական ուսումնական պլանը ավանդաբար ընկալվել և կազմվել է որպես **գիտելիքահեն ծրագիր**: Այս մոտեցմամբ կարևորվում է մեթոդների իմացությունը, մետաճանաչողությունը և վերաբերմունքային գիտելիքը: Այստեղ առանցքայինը ուսումնական պլանի նպատակներից ելնելով համապատասխան գիտելիքի ընտրությունն ու դասակարգումն է:

Նպատակների վրա հիմնված ուսումնական պլանի համաձայն՝ ուսուցման նպատակները, որոնք սահմանվում են որպես սովորողներից ակնկալվող վարքագիծ, պայմանավորում և ուղղորդում են առարկայական ծրագրի ընտրությունն

ու բովանդակությունը: Կրթական ծրագիրը ձևակերպվում է առ այն, թե սովորողներն ինչ պետք է սովորեն սահմանված նպատակներին հասնելու համար:

Կարողունակությունների (կոմպետենցիաներ) վրա հիմնված կրթական ծրագիրը նպատակների վրա հիմնված կրթական ծրագրի զարգացման դրսևորումն է:Կարողունակությունների դիտարկումը՝ «ինչ է կարողանում անել սովորողը» տեսանկյունից, թույլ է տալիս կիրառել մի մոտեցում, որի առանցքը սովորողների արդյունքներն են: Այս մոտեցման մեջ կարողունակությունները (արժեք, վերաբերմունք, հմտություններ և գիտելիք ու քննադատական ընկալում) համարվում են փոխկապակցված:

Հանրակրթական պետական չափորոշիչն այժմ կարողունակությունների վրա հիմնված կրթական ծրագրի մոտեցման շրջանակներում է, սակայն այն չի բացառում գիտելիքահեն և նպատատակաուղղված լինելը: Այն սահմանում է շրջանավարտներին ներկայացվող որակական պահանջները՝ ըստ կրթական աստիճանների (**կարողունակություններ** և ակնկալվող **վերջնարդյունքներ**):

Միջնակարգ կրթության կարողունակությունները ձևավորվում են սովորողի ուսումնառության ընթացքում ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի, սովորողի կողմից ուսումնական առարկաների ծրագրերի **բովանդակության յուրացման**, ինչպես նաև ուսուցման գործընթացում **դաստիարակության** միջոցով: Կոմպետենցիան չափորոշիչը սահմանում է որպես «ըստ իրավիճակի արդյունավետ ու պատշաճ արձագանքելու ձև», որ հիմնվում է տարբեր առարկաներից ձեռք բերված գիտելիքի, արժեքների, հմտությունների և դիրքորոշումների վրա: «Լեզվական կոմպետենցիան», օրինակ, լեզուն դիտարկում է որպես «հասարակական կյանքին մասնակցության համապիտանի գործիք», հետևաբար կարևորվում է դրա իմացության այն աստիճանը, որը թույլ կտա այն կիրառել ակադեմիականից մինչ առօրյա շփման մակարդակում:

2021 թվականին ՀՀ կառավարության կողմից հաստատված Հանրակրթության պետական չափորոշչով սահմանվել են միջնակարգ կրթության հետևյալ ութ կարողունակությունները[2].

1) լեզվական գրագիտություն
2) սովորել սովորելու
3) ինքնաճանաչողական և սոցիալական
4) ժողովրդավարական և քաղաքացիական
5) թվային և մեդիա

[2] https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788

6) մշակութային

7) մաթեմատիկական և գիտատեխնիկական

8) տնտեսական

Չափորոշիչը ներառում է նաև դաստիարակությունը՝ փոխադարձ հարգանքի պայմաններում որպես հավասարներ ապրելու համար, ինչը դեռևս շատ հեռավոր ապագայի երազանք է:

Ուսուցիչը պարտավորվում է ընտրել դասավանդման նպատակահարմար մեթոդներ, խրախուսել սովորողների ակտիվ մասնակցությունը՝ իրենց ուսման վերաբերյալ որոշումների կայացման հարցում: Նաև պարզել, թե դասավանդումը որքանո՞վ է նպաստում, որ սովորողները դառնան ակտիվ քաղաքացիներ,հարգեն մարդու իրավունքները, արտահայտեն սեփական մտքերը, լսեն տարբեր տեսակետներ, դրսևորվեն որպես ակտիվ քաղաքացի, աշխատեն միմյանց հետ և ամրապնդեն իրենց իմացությունը, գործնականում կիրառեն իրենց սոցիալական հմտությունները՝ այս կերպ խթանելով նաև անհատական և սոցիալական գործընթացներն ու վերջնարդյունքները: Շատ կարևոր է նաև ուսումնական գործընթացում ներառել բոլոր սովորողներին: Կիրառելով ներառական մեթոդներ՝ ուսուցիչն ասում է՝ «դուք բոլորդ կարևոր եք և արժեքավոր», «մենք բոլորս կարող ենք մեկս մյուսից սովորել»[3]:

Մյուս կողմից, երբ ուսուցիչը ժամանակի մեծ մասն անց է կացնում դասարանի առջև կանգնած՝ դասախոսելով և գրատախտակին գրելով, իսկ սովորողները լսում , վերարտադրում կամ արտագրում են, նրաց փոխանցում է՝ «ես ունեմ գիտելիք», «դուք սովորելու և հետևելու եք»: Թերևս երկու ձևն էլ ընդունելի են `կախված տարբեր հանգամանքներից, և չի կարելի միանշանակ առավելություն տալ մեկին և մերժել մյուսը,որովհետև «դուք բոլորդ կարևոր եք և արժեքավոր», չի նշանակում բոլորդ կարևոր եք, բացի ուսուցչից, և ոչ էլ՝«մենք բոլորս կարող ենք մեկս մյուսից սովորել», նշանակում է բոլորդ իրարից սովորեք, բայց ուսուցչից՝ոչ:

Սովորողի գնահատման նպատակները

Ուսումնառությունն ու գնահատումը պետք է կազմակերպել որպես մեկ շաղկապված պրոցես: Ուսուցման և ուսումնառության մեթոդները պետք է համապատասխան լինեն այն կարողունակությունների զարգացմանը, որոնք ցանկանում ենք գնահատել: Համագործակցային հմտություններն, օրինակ՝ կարելի է լավագույնս զարգացնել այնպիսի ուսումնական աշխատանքների միջոցով, որոնք

[3] «Ներառական կրթության ռազմավարություններ», Գլուխ 2:

թույլ են տալիս և խրախուսում են սովորողներին՝ համագործակցել: Սա նշանակում է, որ համագործակցությունը պետք է լինի գնահատման գործընթացի մի մաս:

Սովորողի գնահատումը կարող է ծառայել մի շարք տարբեր նպատակների, և այդ նպատակներից յուրաքանչյուրը կարելի է դիտարկել և՛ առանձին, և՛ մյուս նպատակների հետ մեկտեղ.

- ստանալ սովորողների կարողունակությունների զարգացման առաջընթացի նկարագրությունը
- որոշել՝ արդյոք սովորողները գրանցում են ակնկալվող առաջընթացը՝ նախատեսվող կարողունակությունների ձեռքբերման իմաստով
- պարզել սովորողների ընթացիկ առաջընթացը և ապագայի ուսումնառության նպատակները
- պարզել՝ ինչ կոնկրետ դժվարությունների կարող են հանդիպել սովորողները
- գնահատել ուսուցիչների աշխատառճները,փորձառությունները՝ հետադարձ կապով կարծիք հայտնելու համար, թե իրենց կողմից տարվող ուսուցումն ինչպես կարելի է ավելի արդյունավետ դարձնել
- գնահատել կոնկրետ միջամտության կամ ուսումնամեթոդական ծրագրի արդյունավետությունը[4]:

Գնահատման անմիջական արդյունքները կարելի է տարբեր եղանակներով գործածել ուսուցման և ուսումնառության պրոցեսի բոլոր փուլերում:

Գնահատման բնութագրիչները ձևակերպվել են «կրթական վերջնարդյունքների» տեսքով: Սա նշանակում է, որ դրանք կարելի է գործածել ոչ միայն գնահատման նպատակով, այլ նաև կրթական ծրագրերի մշակման ու մանկավարժական պլանավորման նպատակով: Բնութագրիչներով ձևակերպված վարքագծերի դիտարկման վրա հիմնված գնահատմամբ կարելի է վեր հանել սովորողների հմտության աստիճանը:Այսպիսի գնահատումները կարող են ցույց տալ այն թեմաները, որոնց ուղղությամբ ուսուցիչները պետք է կենտրոնացնեն իրենց միջամտությունները, և դրանք կարելի է նաև օգտագործել ուսումնական աշխատանքներ կազմելու համար: Այլ կերպ ասած՝ բնութագրիչների վրա հիմնված գնահատումները կարելի է օգտագործել ինչպես ամփոփիչ, այնպես էլ ձևավորող գնահատում իրականացնելիս:

Հանրակրթական հիմնական ծրագրերի բովանդակությունը նպատակաուղղված է ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքների միջոցով

[4] «Կարողունակությունների կողմնորոշիչ շրջանակ՝ ժողովրդավարական մշակույթի համար» https://elearning.kasa.am/mod/url/view.php?id=7595&forceview=1

կարողունակությունների ձևավորմանը, ներկայացված է բովանդակության բաղադրիչներով, ուսումնական բնագավառներով և որոշակիացվում է ուսումնական առարկաների ծրագրերում: Հանրակրթական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը սահմանվում է ըստ կրթական ծրագրերի աստիճանների :

Չափորոշչով սահմանվում են հանրակրթության հիմնական ծրագրերի բովանդակության հետևյալ բաղադրիչները՝

- գիտելիք.
- հմտություն.
- դիրքորոշում.
- արժեքային բաղադրիչ

Առարկայական նոր ծրագրերում ներառված է նաև «**խաչվող հասկացություններ**» ենթաբաղադրիչը :

Խաչվող հասկացությունները նորություն են մեր կրթական համակարգում: Դրանք հենակետային գաղափարներ են, որոնք ընհանրական են տարբեր գիտությունների համար և օգնում են սովորողներին միավորել տարբեր առարկաներից ձեռք բերած գիտելիքները՝ աշխարհայացքի ամբողջական լինելու հարցում: Դրանք պետք են բոլոր առարկաների ուսուցման ժամանակ և կրթական բոլոր աստիճաններում: Խաչվող հասկացությունների ներդրման անհրաժեշ-տությունը պայմանավորված է առարկայի առանձնահատկությամբ, և ոչ բոլոր հասկացություններն են պարտադիր մեկ առարկայի շրջանակներում: Դրանք պետք է կիրառել ըստ թեմայի նպատակահարմարության՝ հաշվի առնելով թեմայի յուրահատկությունը: Սակայն ընդհանուր պահանջ է, որ բոլոր առարկաներում խաչվող հասկացություրնները ընտրվեն ու կիրառվեն՝ իրական կյանքի հետ համադրելով: Դրանք են[5] ՝

- Օրինաչափություն
- Պատճառ և հետևանք
- Մասշտաբ, համամասնություն , քանակ
- Կառուցվածք և գործառույթ
- Համակարգ և մոդել
- Էներգիա և նյութ
- Կայունություն և փոփոխություն
- Զարգացում
- Անհատ և հարաբերություններ

[5] Հասմիկ Այվազյան, «Դասի կառուցվածքային տարրերի կիրառումը հանրակրթական առարկաների օրվա պլանների կազմման գործընթացում» Երևան 2014:

- Ժամանակ և տարածություն
- Անհատական և մշակութային արժեհամակարգ
- Համաշխարհայնացում

Առարկայական նոր չափորոշչում նշվում են նաև **միջառարկայական կապերը**:

Ժամանակակից աշխարհում կարևոր նշանակություն է ստանում առարկաների և գիտությունների համագործակցությունը՝ միջառարկայական կապերը: Ուսուցման գործընթացում կարևոր տեղ պետք է հատկացնել միջառարկայական կապերին, որոնք ուսուցման հաջողության անհրաժեշտ պայմաններից են: Յ.Ա.Կոմենսկին իր «Մեծ դիդակտիկա» աշխատության մեջ նշում է, որ ուսումնական առարկաների փոխկապակցված ուսուցումը երեխաներին սովորեցնում է բացահայտել ուսումնասիրվող առարկաների և երևույթների միջև եղած կապերը. «Ամեն ինչ ամրապնդել բանականության հիմունքներով, նշանակում է ամեն ինչ սովորել՝ մատնացույց անելով պատճառները, այսինքն՝ ոչ միայն ցույց տալ, թե ինչպես է այս կամ այն բանը տեղի ունենում, այլ նաև ցույց տալ, թե ինչու դա այլ կերպ լինել չի կարող: Չէ՞ որ իմանալ որևէ բան նշանակում է իրը ճանաչել իր փոխկապակցվածության մեջ»[6]:

Ուսուցիչը, որպեսզի կազմի դասերի արդյունավետ պլաններ և իրագործի դրանք , պետք է ուսումնասիրած և յուրացրած լինի հանրակրթական չափորոշիչն ու առարկայական ծրագրերը և ըստ այդմ կազմակերպի ուսուցման և դաստիարակության գործընթացը: Պետք է նկատի առնել նաև, որ չափորոշչում բավականին շատ են նոր բաղադրիչները՝խաչվող հասկացություններ, կարողունակությունները, վերջնարդյունքներ, միջառարկայական պարտադիր կապեր: Կարողունակությունները հատկապես նոր հմտություններ են, որոնցից շատերին անգամ հասուն մարդիկ, ներառյալ նաև ուսուցիչներս, դեռևս չենք տիրապետում, և գիտելիքների և կարողունակությունների ձեռքբերման կարիք կա նաև ուսուցիչներիս մոտ:Ուստի անհրաժեշտ է ծանոթանալ նոր գաղափարներին և հասկացություններին, այնուհետև ըստ այդմ կազմել դասապլաններ և հետազոտել դրանք դասավանդման ընթացքում:

[6] «Ուսուցման արդյունավետ հնարներ», Երևան 2020:

Ուսուցչի գործունեության դիտարկումներ

Մանկավարժական աշխատանքի ընթացքում ի հայտ են գալիս բազմաթիվ խնդիրներ, որոնց պատասխանները հնարավոր չէ գտնել, որովհետև այդ բոլոր խնդիրները հնարավոր չէ կանխատեսել: Այդ պատճառով դասը պլանավորելուց առաջ պետք է ստուգել, թե թեմատիկ պլանով քանի դասաժամ է հատկացված դասին: Այնուհետև ծանոթանալ թեմայի չափորոշչային պահանջներին: Ծանոթանալ դասի նյութին: Ճշտել, թե չափորոշչային որ պահանջներն են մասամբ կամ ամբողջությամբ ապահովվելու այս դասի ընթացքում: Կազմել այդ պահանջների կատարումը լիարժեք ստուգող հարցերը: Ճշտել, թե ինչ գիտելիքներ, կարողություններ և հմտություններ պետք է ձևավորել տվյալ դասի ընթացքում, որպեսզի թեման ավարտելուց հետո աշակերտների գիտելիքները, կարողությունները և հմտությունները համապատասխանեն չափորոշչային պահանջներին: Չափորոշչային այս պահանջները չեն պարտադրում ուսուցչին որևէ կոնկրետ մեթոդ: Եթե Ա պահանջը չափորոշչում գտնվում է Բ պահանջից առաջ դեռևս չի նշանակում, որ Ա պահանջը բավարարող նյութը պետք է ուսուցանել Բ պահանջին բավարարող նյութից առաջ: Հնարավոր է, որ անհրաժեշտ է Բ-ն սովորելուց հետո միայն պետք է սովորել Ա-ն, կամ Ա-ն և Բ-ն պետք է սովորել միասին: Կամ ուսուցիչը սովորեցնում է մի որևէ առանձին նյութ, որի յուրացումը ապահովում է Ա-ի և Բ-ի իմացությունը:

Չափորոշիչը չի պահանջում, որ աշակերտներին սովորեցնենք այն հերթականությամբ, ինչ հերթականությամբ դրված է չափորոշչում:

2.Դասարանում լինում են տարբեր ընդունակություն ունեցող աշակերտներ և նրանց մի մասը կարող է նյութը յուրացնել ավելի արագ կամ ավելի դանդաղ:

Որպեսզի դասավանդումն առավել արդյունավետ լինի, հարկավոր է պատասխանել հետևյալ հարցերին.

- Գիտելիքների ինչպիսի նախնական պաշար ունեն աշակերտները
- Ինչքան աշակերտ կա դասարանում և ինչքան ժամանակ ունենք
- ինչպես կառուցել դասը, որ ընդգրկվի ամբողջ նյութը և բոլոր աշակերտները ակտիվ լինեն
- Ինչպիսի մեթոդներ կիրառել
- Խմբային աշխատել, զույգերով , թե անհատական
- Ինչպիսի դիդակտիկ նյութեր օգտագործել
- Ինչ առաջադրանքներ անել դասարանում և տանը

Դասի ամենօրյա պլանավորումը լավ դասավանդման երաշխիքն է, սակայն լավ պլանավորումը չի նշանակում նաև լավ իրագործում: Անհրաժեշտություններ են նաև `

- գիտելիքների մեծ պաշարը
- կազմակերպչական ունակությունները
- տակտի, էթիկայի զգացողությունը
- մեթոդների իմացությունը
- մարդկային բարձր որակները

Արդյունավետ է մշակել միանգամից մի քանի դասերի պլաններ, որոնք նույն թեմայի շրջանակում են: Դա օգնում է՝

- ընտրել վերջնարդյունքները և ճիշտ գնահատել
- որոշել դասի դեղը թեմայի համակարգում
- փոխկապակցել տարբեր դասերը
- ռացիոնալ տնօրինել ժամանակը[7]:

Անհրաժեշտ է նաև միշտ վերլուծել ձախողումներն ու հաջողությունները, և դրանք արձանագրել ինչ-որ տեղ:

3.Դասի նպատակը, բովանդակությունը,մեթոդները, աշակերտների ուսումնական գործունեությունը և գնահատումը մեկ ամբողջական փոխկապակցված համակարգ են: Պետք է հաշվի առնել նաև երեխաների բազմաբնույթ մտածելու և սովորելու հանգամանքը:

Վերը թվարկված և հետազոտության արդյունքում ուսումնասիրված բոլոր նկատառումներն հաշվի առնելով՝ եկանք այն եզրահանգման, որ այս ամենը կիրառելու ամենաարդյունավետ դասավանդման ձևը Ուսուցման համընդհանուր ձևավորման՝ ՈՒՀՁ, վրա հիմնված դասավանումն է, որը թեև բավականին բարդ, աշխատատար, շատ ռեսուրսներ պահանջող դասավանդման ձև է, սակայն ամենակատարյալը, որին կարող է երբևէ հասնել մանկավարժությունը:

Ուսուցման համընդհանուր ձևավորումը՝ որպես դասավանդման լավագույն մեթոդաբանություն

ՈՒՀՁ-ն կրթական մոտեցում է, շրջանակ, որը թույլ է տալիս ուսումնառության բոլոր փուլերում, սկսած պլանավորումից, կրթական միջավայրը, ուսումնական

[7] «Մայրենի - 5 առարկայական ծրագիր»՝հաստատված 11.24.22.:

ծրագրերը, դասավանդման մոտեցումը, ուսումնառության գնահատման գործընթացը հարմարեցնել սովորողների բազմազան կարիքներին և առանձնահատկություններին՝ պահպանելով բարձր ակնկալիքներ **բոլոր սովորողների** համար:

Ուսումնառության համընդհանուր ձևավորումն իրենից ենթադրում է երեք գործընթացներ.

1. <u>Նախապես ուսումնասիրել և ճանաչել յուրաքանչյուր երեխայի առանձնահատկությունները</u>:
2. <u>Հաշվի առնել հնարավոր խոչընդոտները և ճկուն պլանավորել</u> :
3. <u>Օգտվել լրացուցիչ օգնության ռեսուրսներից:</u>

Այս գործընթացներն արդյունավետ իրագործելու համար ՈՒՀՁ-ն դասավանդողներին առաջարկում է 3 ուղենիշներ.

1. **Տրամադրել նյութը բազմազան եղանակներով**:
2. **Տալ գործելու եւ արտայատվելու բազմազան հնարավորություններ**:
3. **Խթանել աշակերտի հետաքրքրությունը բազմազան եղանակներով եւ հնարավորություններով**[8]:

ՈՒՀՁ-ն հրաժարվում է այն տեսակետից, որ սովորողները լինում են «նորմալ» և «ոչ նորմալ» կամ սովորական և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող: Համընդհանուր ձևավորման նպատակը *<u>ուսուցման նպաստավոր միջավայր ստեղծելն է բոլորի համար</u>:* Այն կոչված է բարելավելու ներառականությունը՝ ուսուցչի վրա դնելով դասավանդման և ուսումնական գործընթացի կազմակերպման պարտականությունները: Ուսումնառության համընդհանուր ձևավորում կիրառելիս հաճախ հաշվի են առնվում յուրաքանչյուր սովորողի կրթական կարիքները:

Բոլոր դեպքերում նյութը ներկայացնելու, յուրացրածը արտահայտելու և ներգրավումն ապահովելու համար կիրառվող մոտեցումների բազմազանությունը ուսուցիչներին հնարավորություն են տալիս դասերը կազմակերպելու այնպես, որ դրանք համապատասխանեն բոլոր աշակերտների կարիքներին՝ անկախ կրթական կարիքի ճանաչված լինելու փաստից:

Այսպիսի ուսուցումը բարձրացնում է աշակերտների մոտիվացիան, նյութի նկատմամբ հետաքրքրությունը, ուսման առաջադիմությունը, աշակերտներին հաղորդում է ինքնավստահություն: Այն միաժամանակ բազմաբնույթ է, տաբերակված և համագործակցային :

[8] Զ. Սիրունյան, Ս. Անտոնյան, Ս. Վանեսյան, «Թեմատիկ պլանավորումն ըստ չափորոշչային պահանջների», Երևան 2014:

Դասի պլան ՈՒՀՁ սկզբունքներով

Ուսուցիչ	Ա . Պետրոսյան
Դասարան	5-րդ
Առարկա	Մայրենի
Թեմա	«Ոսկի արտ» հայկական ժողովրդական հեքիաթը. նախադասություն
Խաչվող հասկացություններ	Անհատ և հարաբերություններ, ժամանակ և տարածություն
Միջառարկայական կապեր	Նկարչություն, երաժշտություն, տեխնոլոգիա
Նպատակներ	Ձևավորել տեքստի ուսումնասիրման կարողություններ, զարգացնել ընթերցելու, կարդացածը վերարտադրելու, հիմնական գաղափարը գտնելու հմտություններ, նպաստել ստեղծագործելու և վերլուծելու կարողությունների զարգացմանը, դասավանդել ՈՒՀՁ սկիզբունքերին համապատասխան
Վերջնարդյունքներ	Կարողանալ ըմբռնել հեքիաթի և իրականության տարբերությունը, վարժ, անսխալ և արտահայտիչ կարդալ բնագիրը, հեքիաթի բովանդակությունը վերատադրել վերլուծելով և ստեղծագործաբար, ներկայացնել հերոսներին, նրանց արարքներն ու դրդապատճառները, առանձնացնել գլխավոր միտքը և հիմնավորել, գտնել մեղեդի,նկարել հերոսներին, ծեփել, բեմականացնել հեքիաթը
ՀՊՁ	Հ10-1, Հ 10-2,Հ10-22, Հ 10-33, Հ 10-35, Հ 10-41
Ընթացքը /1-ին ժամ/	1.Վերհիշել՝ ինչ է հեքիաթը, տեսակները, բանալի բառերով գուշակել հեքիաթի բովանդակությունը: 2.Ուսուցչի կողմից հեքիաթի ընթերցում, անծանոթ բառերի բացատրում, բառատետրում գրանցում: 3.«Ոսկու կարասը» մուտֆիլմի դիտում: Հարցուպատասխան հեքիաթի և իրականության շուրջ, մուտֆիլմի և հեքիաթի համեմատում: 4.Բառային աշխատանքի կատարում զուգերով: Աշխատանքի անդրադարձ: 5.Տնային հանձնարարություն.վարժ և արտահայտիչ կարդալ հեքիաթը, նկարել կամ ծեփել հերոսներին, գրել օրհնանքներ/առաջադրանքներն՝ ըստ կարողությունների/:
Ընթացքը/2-րդ ժամ/	1.Տնային առաջադրանքների ստուգում, գնահատում 2.Հեքիաթը կարդում են՝միմյանց շարունակելով: 3.Խմբային աշխատանքով կատարում են տեքստային

	առաջադրանքները: 4.Խմբերը փոխադարձաբար գնահատում են միմյանց՝ ըստ ռուբրիկի: Կատարում են անդրադարձ խմբային աշխատանքի վերաբերյալ՝ նշելով թերություններն ու առավելությունները 5. Տնային հանձնարարություն. կազմել նախադասություններ տրված բառերով, բանալի մտքի շուրջ հորինել մի պատմություն,հեքիաթը պատմել ըստ նկարի, ծեփած հերոսներին օգտագործելով՝ պատրաստվել դերային խաղի, գրել բեմագիր/ առաջադրանքները բաշխվում են՝ ըստ կարողությունների:
Ընթացքը /3-րդ ժամ/	1.Ընթերցվում են բանալի մտքի շուրջ կազմված ստեղծագործական աշխատանքներն ու գնահատվում ուսուցչի , դասարանի և ինքնագնահատման միջոցով: 2.Ստեղծագործաբար կամ վերարտադրելով պատմում են հեքիաթն `ըստ սեփական նկարի կամ ծեփած հերոսների, ցուցադրում են դերային խաղ՝ իրենց ընտրած երաժշտական ձևավորմամբ:Գնահատվում են՝ըստ ռուբրիկի: 3. Գրատախտակին գրվում են տանը կազմած նախադասությունները և բարձրաձայն ընթերցվում :Ուսուչցի կողմից բացատրվում է դասը: 4.Զույգերով ընթերցում են դասը՝ կիրառելով փոխգործուն նշանների համակարգը: Բացատրվում է չընկալվածը: 5. Տնային աշխատանքի հանձնարարում. արտագրել դասը, բարձրաձային պատմել և ձայնագրել, առաջադրանք 1,5, 9/էջ 17/, պատրաստել հաղորդում «Բարի գործ» վերնագրով: /Առաջադրանքները բաշխվում են՝ ըստ կարողությունների/
Ընթացքը/4-րդ ժամ/	1. Տնային առաջադրանքների ստուգում, գնահատում: 2.խմբային աշատանքով կատարել դասագրքի 2,3,4,6 առաջադրանքները՝ կատարելով դերաբաշխում՝ գրող, գծագրող, նկարող, աշխատանքներն հսկող: 3.Գնահատում՝ ըստ ռուբրիկի: 4.Խմբային աշխատանքի անդրադարձ: 5. Տնային աշխատանքի հանձնարարում. հորինել հեքիաթ՝ 1.գրել, 2. բանավոր պատմել և ձայնագրել, 3. նկարել կամ կտրել նկարներից 4. հերոսներին ծեփել կամ պատրաստել որևէ նյութից /առաջադրանքնեը բաշխվում են ՝ըստ կարողությունների/:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսուցչի կողմից սովորողների ուսուցման և դաստիարակության արդյունավետ պլանավորումն ու իրականացումը ենթադրում է ոչ միայն Հանրակրթական պետական չափորոշչի և Առարկայական ծրագրի լավ ուսումնասիրում և տիրապետում, այլև բազմազան նորագույն մեթոդների կիրառում, հետազոտում և վերլուծում, մանկավարժության և հոգեբանության նորագույն ուսումնասիրությունների վերաբերյալ տեղեկացվածություն, առարկայական գիտելիքների մշտական հարստացում, ուսուցչական համայնքի հետ ակտիվ փոխգործակցություն, տեղեկատվական տեխնոլոգիաների տիրապետում և շատ այլ հմտություններ, կարողություններ ու որակներ, որոնց արդյունքում միայն դասավանդողը և մանկավարժը կարող է դառնալ Ուսուցիչ:

Սույն հետազոտության արդյունքում պարզեցինք նաև, որ ուսուցման թերևս լավագույն հայեցակարգը ուսուցման համընդհանուր ձևավորումն է՝ ՈՒՀՁ-ն: Այն սովորողների բազմազանությունը ճանաչելու, հարգելու և արժևորելու լավագույն միջոցն է:

ՈՒՀՁ-ն թույլ է տալիս զարգացնել յուրաքանչյուր սովորողի ներուժը և բարձր ակնկալիքներ սահմանել ակադեմիական առաջընթացի, որպես անհատ զարգանալու համար՝ անկախ սոցիալական կարգավիճակից, անհատական տարբերություններից, հաշմանդամությունից, սեռից, կրոնից, կրթության առանձնահատուկ պայմանների կարիքից և այլ հանգամանքներից: ՈՒՀՁ-ն հնարավորություն է տալիս պլանավորել դասը՝ հաշվի առնելով կոնկրետ աշակերտների տարբերությունները և առանձնահատկությունները:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հասմիկ Այվազյան, «Դասի կառուցվածքային տարրերի կիրառումը հանրակրթական առարկաների օրվա պլանների կազմման գործընթացում» Երևան 2014:
2. Զ. Սիրունյան, Ս. Անտոնյան, Ս. Վանեսյան, «Թեմատիկ պլանավորումն ըստ չափորոշչային պահանջների», Երևան 2014:
3. «Մայրենի - 5 առարկայական ծրագիր»՝հաստատված 11.24.22.:
4. «Ուսուցման արդյունավետ հնարներ», Երևան 2020:
5. «Ներառական կրթության ռազմավարություններ», Գլուխ 2:
6. «Կարողունակությունների կողմնորոշիչ շրջանակ՝ ժողովրդավարական մշակույթի համար» https://elearning.kasa.am/mod/url/view.php?id=7595&forceview=1
7. https://lib.armedu.am/files/resource/files/2022-10-21/40a54ff9ecaf170aedfe9e77726eb1ed.pdh
8. https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788